

## ՄԱՏԵՐԻԱԼԻՉՄ ԵՒ ԻԴԷԱԼԻՉՄ

### II

Մատերիալիզմ ասելով հասկանում ենք, ինչպէս նախընթաց բացատրութիւններից տեսանք, բնազանցական այն տեսութիւնը, որ այն հարցին, թէ ինչ է իրականութեան էութիւնը, պատասխանում է. իրականութեան մէջ գոյութիւն ունի մարմինը, նիւթը. նրա յատկութիւններն են տարածականութիւն և անթափանցկութիւն. նրա առաջին և էական ներգործութիւնն է շարժողութիւնը: Այս սկզբունքով կարող են բացատրուել և պէտք է բացատրուին իրականութեան բոլոր երևույթները, առանձնապէս նաև այսպէս կոչուած գիտակցութեան երևոյթները:

Վերջին կէտը, հոգեկան երևոյթների վերածուած ֆիզիքականի մատերիալիզմի իսկական խնդիրն է, և նա աշխատում է այս պատճառարանել և հաստատել հետևեալ կերպով:

Փորձի և զիտողութեան վրայ հիմնուած իրողութիւն է, որ հոգեկան երևոյթները առաջ են գալիս միմիայն ֆիզիքական երևոյթների կապակցութեան մէջ. որքան մենք հնար ունինք իմանալու, տեսնում ենք, որ միմիայն օրգանական, կամ աւելի ճիշտ, կենդանիների մարմինների մէջ են կատարւում գիտակցութեան երևոյթներ. նրանք առանձնապէս երևան են գալիս նեարդային համակարգութեան գործունէութեան հետ կապուած: Մրանից հետևում է, որ այդ երևոյթների պատճառը գիտութիւնը պէտք է որոնէ այս մարմինների առանձնայատկութեան մէջ. հոգեկան երևոյթները պէտք է բժրոնել իբրև նեարդային համակարգութեան գործունէւն:

Մարդկային սովորակաւ միտքը միևնոյն իրողութիւնից ուրիշ եզրակացութեան էր հանգում. նա հետևեցնում էր, թէ ուրեմն կենդանիների մէջ մի առանձին բան կայ, մի ոյժ կամ մի էութիւն, որ այս երևոյթներն առաջ է բերում: Սա մի ելք

է, ասում է մատերիալիստ փիլիսոփան, որ գտնում է նախնական մտածողութիւնը, որ դեռ զուրկ է գիտութեան միջոցներից, որտեղ նա հանդիպում է արտակարգ երևոյթներին, ընդունում է նրանց բացատրութեան համար առանձին զօրութիւն կամ էութիւն: Այսպէս նախնական միտքը որոտի և կայծակի պատճառ համարում է կայծակի Աստծուն, որ բնակութիւն ունի երկնքում, հիւանդութեան երևոյթները վերագրում է հիւանդութեան առանձին նիւթի, և այլն: Նախնական մտածողութեան հետեւելով, երկար ժամանակ տիրող բնութեան փիլիսոփայութիւնը բացատրում էր Չրհորի Չրի բարձրանալը խողովակի մէջ դատարկութեան երկիւղից, օրգանական կեանքի երևոյթների պատճառ համարում էր մի տեսակ առանձին կենսական ոյժ: Նոյն եղանակով բացատրում էին նաև գիտակցութեան երևոյթները իբրև մի առանձին, ոչ մարմնական սկզբունքի ներգործութիւն—և այդ սկզբունքն անուանում էին հոգի: Այսպիսի բացատրութեամբ, ի հարկէ, ոչինչ չի պարզուիլ. հոգին ուրիշ ոչինչ է, եթէ ոչ մի անձանօթ ոյժ կամ էութիւն, ճիշտ այնպէս, ինչպէս դատարկութեան երկիւղը. մտածողութեան պատճառը համարել հոգին, ճիշտ նոյնն է, ինչ որ Մոլիերի գիտնական դոքտորները աշխատելով բացատրել այն իրողութիւնը, որ օպիումը քնեցնում է, ասում էին, ապա ուրեմն օպիումի մէջ բուն պատճառող մի զօրութիւն կայ թագնուած: Գիտական հետազօտութիւնը,—այսպէս է շարունակում մատերիալիստը,—տարբերում է նախնական, չչ գիտական մտածողութեան եղանակից նրանով, որ երևոյթների պատճառ համարում է ոչ թէ առանձին էութիւններ կամ ոյժեր, այլ ուրիշ, նախընթաց և ընթացակից երևոյթներ: Բնական գիտութիւնների մէջ բացատրել նշանակում է երևան բերել այն օրէնքը, որով այս երևոյթը ուրիշ երևոյթների հետ կապուած է. այնպէս որ, եթէ այս կամ այն երևոյթը կատարւում է, կարելի լինի նախատեսել, որ այս կամ այն երևոյթն էլ պէտք է կատարուի: Գիտութիւնը նոյն եղանակով պէտք է բացատրէ նաև գիտակցութեան երևոյթները. նա պէտք է որոնէ հոգեկան-գիտակցական երևոյթներին կանոնաւոր կերպով ընթացակից կամ նախընթաց երևոյթները, որպէս զի որոշէ այդ երևոյթների կապակցութիւնը բնական օրէնքների համաձայն: Արդ՝ հոգեկան երևոյթներին ընթացակից և նախընթաց երևոյթները, ինչպէս փորձը ցոյց է տալիս, բնախօսական երևոյթներ են, որ կատարւում են ուղեղի և նեարդային համակարգութեան մէջ: Հաստատւում են ուղեղի և նեարդային համակարգութեան մէջ: Հաստատւում, գիտութեան խնդիրն է փոխանակ «հոգեբանութիւն» կո-

չուած կեղծ գիտութեան, իր նախնական «հոգի» և «հոգեկան ոյժեր» սկզբունքներով, այստեղ ևս բնագիտական եղանակ գործ դնել և բնագիտական բացատրութիւն գտնել: Գիտական հոգեբանութիւնը, ուրեմն, բնախօսութիւնն է: Այսպէս կոչուած գիտակցութեան երևոյթները, որոնք սկզբում իբրև առանձնայատուկ և ֆիզիքական երևոյթների հետ անհամեմատելի են երևում, իսկապէս ամենևին առանձին տեսակ բաներ չեն. գիտութիւնը կարող է այդ երևոյթները նկատել իբրև առանձնայատուկ կերպով փոխակերպուած, որոշ տեսակ շարժողութեան երևոյթներ. հոգեկան երևոյթներն ինքն ըստ ինքեան, օջեկտիւ նայելով ուրիշ ոչինչ են, բայց եթէ ընախօսական երևոյթներ:

Այս տեսութիւնը հիմնովին ապացուցւում է հետևեալ կերպով: Նորագոյն բնագիտութեան ամենհիմնական սկզբունքն է էներգիայի պահպանութեան սկզբունքը. տեղի է ունենում շարժողութեան փոխանցում և ձևափոխութիւն, ամբողջ զանգուածի շարժումը դառնում է մասնիկների (մոլեկուլների) շարժում, գործող ոյժը դառնում է լարուած ոյժ, պահպանում է այդ դրութեամբ առանց կորստի և կարող է նորից գործող ոյժ դառնալ: Արդ, կենդանական մարմինների մէջ տեղի են ունենում հետևեալ երկու դիտողութիւնները: Դրսից շարժումը հաղորդւում է նեարդային համակարգութեան. օդի տատանումները, որ սկիզբ են առնում հնչող զանգակից, զրգուում են լսողութեան նեարդերը և առաջ են բերում այստեղ մի բնախօսական պրոցեսս, որը, ինչպէս ապացուցուած է, նեարդային թելերի միջոցով հաղորդւում է կեդրոնական նեարդային գործարանին: Թէև մինչև այժմ մենք հնար չուենք այդ բնախօսական պրոցեսսին մինչև իւր ընթացքի վերջը հետևելու, բայց անկասկած նա չի անհետանում, կորչում. ինչ է լինում: Միաժամանակ առաջ է գալիս մի զգացողութիւն, լսւում է մի ձայն: Սրանից եզրակացնում ենք. զգացողութիւնն ուրիշ ոչինչ է, եթէ ոչ նեարդային կեդրոնական գործարանի մէջ արտաքուստ հաղորդուած զրգոի առաջ բերած նեարդային ընախօսական երևոյթ:

Մենք դիտում ենք նաև հակառակ գործողութիւնը. ես մեկնում եմ ձեռքս և բռնում մի առարկայ. բնախօսութիւնն այսպէս է բացատրում այս երևոյթը. անդամները շարժուում են, երբ մկանները կծկւում են. իսկ այս կատարւում է, երբ ուղեղից դէպի մարմնի անդամները ձգուած նեարդերը շարժուում են, իսկ սրանք շարժուելու համար զրգոի ստանում են ուղեղի

կեդրոնական գործարաններին, թէ այդ գրգիռն ինչպէս է սկսւում նեարդային կեդրոնում, այդ մասին ընախօսական բացատրութիւն չունենք: Այս դէպքում ևս ինքնադիտողութեամբ նկատւում է, որ միաժամանակ տեղի է ունենում հոգեկան երևոյթ— կամքի մղում, կապուած զգացումների և պատկերացումների հետ: Սրանից եղբակացնում ենք. հոգեկան այդ երևոյթն ըստ ինքեան ընախօսական ֆիզիքական երևոյթ է և հենց այդ երևոյթն է պատճառ շարժող նեարդերի գրգռուելուն, որովհետև ֆիզիքական գործողութիւնը ֆիզիքական պատճառ պէտք է ունենայ: Եթէ ընդունենք, թէ սոսկ մի մտադրութիւն, իբրև սոսկ գիտակցութեան երևոյթ կարող է շարժողութիւն պատճառել, դրանով վերացրած կըլինենք ընագիտութեան այն հիմնական ըսկզբունքը, թէ շարժողութիւնն է շարժողութիւն առաջ բերում, ֆիզիքական պատճառը՝ ֆիզիքական արդիւնք: Եթէ մի սոսկ մըտադրութիւն կարող է ուղեղի մի մասնիկ շարժել, նոյն կերպով նա պիտի կարողանայ նաև լեռներ տեղափոխել, կամ լուսինը իր ճանապարհից շեղել: Վերջիններս ճիշտ նոյն չափով հասկանալի կամ անհասկանալի կըլինեն, որքան առաջինը: Այսպէս ուրեմն, բացատրում են ընախօս հոգեբանները, — արտաքին գրգիռը նեարդերի միջոցով հաղորդւում է նեարդային կեդրոնին, այնտեղ կատարւում է ֆիզիքական-ընախօսական գործողութիւն, որը հաղորդւում է շարժող նեարդերին: Կեդրոնական նեարդային գործարանի ընախօսական երևոյթը ինքնադիտողութեամբ մենք զգում ենք իբրև գիտակցութեան երևոյթ՝ պատկերացում, ըզգացում և կամքի մղում:

Այս կարծիքը աւելի ևս հաստատւում է կենսաբանական և տիեզերաբանական դիտողութիւններով:

Ուշադրութիւն դարձնենք համեմատական անատոմիայի իրողութիւնների վրայ. նրանք ցոյց են տալիս, որ նեարդային համակարգութեան զարգացումը և հոգեկան կեանքի զարգացումը ամենուրէք սերտ կապուած են միմեանց հետ: Դիտելով կենդանական էակները, ստորին տեսակներից մինչև ամենաբարձր տեսակները, տեսնում ենք, որ ուղեղը և միտքը աճում են միմեանց հետ զուգընթաց. մարդը ինչպէս մտաւոր կարողութիւններով, այնպէս էլ ուղեղի մեծութեամբ, առանձնապէս մեծ ուղեղի մեծութեամբ և ներքին զարգացմամբ, կենդանական թագաւորութեան ամենաբարձր տեղն է բռնում: Նրա ուղեղի քաշը, ի հարկէ, բացարձակ ծանրը չէ. օր. փղի ուղեղը երեք անգամ աւելի ծանր է. սակայն մարմնի յարաբերութեամբ ամենից զարգացածը մարդու ուղեղն է. նա կազմում է ամբողջ

մարմնի  $\frac{1}{30}$ -ը, մինչդեռ փղի ուղեղը հազիւ  $\frac{1}{500}$ -ը: Պատահում են, մանաւանդ թռչունների մէջ դէպքեր, որ մարդկային ուղեղի յարաբերական չափն էլ անցնում է. բայց դրանք բացառիկ դէպքեր են և բացատրւում են թռչունի մարմնի արտակարգ թեթևութեամբ: Կասկած չկայ, որ մարդու ուղեղը այն առաւելութիւնն ունի բոլոր կենդանիների ուղեղներից, որ մեծ ուղեղը, մտքի յատուկ գործարանը, ամենից աւելի է զարգացած թէ մեծութեամբ և թէ ներքին բարդ կազմութեամբ:

Նոյն զուգընթաց յարաբերութիւնը նկատւում է և մարդկային աշխարհի մէջ. մտաւոր ստոր աստիճանի վրայ գտնուող ցեղերի ուղեղը շատ քիչ է զարգացած, և քանի բարձրանանք դէպի մտաւոր բարձր զարգացման հասած ցեղերը, կը տեսնենք որ վերջիններս մէջ ուղեղը աւելի է զարգացած: Նոյն իսկ նոյն ցեղի մէջ, ինչպէս ցոյց են տալիս գանկի պարունակութեան բազմաթիւ չափումները, աւելի բարձր հոգեկան զարգացման համապատասխանում է աւելի բարձր զարգացած ուղեղ, ինչպէս և միւս կողմից ապշութիւնը և բթամտութիւնը հետեանք են փոքրագլխութեան և անզարգացած ու վնասուած ուղեղի: Արդ, այս բոլոր իրողութիւնները կարծես ապացուցանում են, թէ հոգին ուղեղն է:

Ուղեղի և հոգու նոյնութիւնը ցոյց են տալիս նաև հոգեբանական և ախտաբանական փորձերն ու դիտողութիւնները. ուղեղի ամեն մի վնասումը կամ խանգարումը իրրև հետեանք առաջ է բերում հոգեկան կեանքի խանգարում: Կենդանիների ուղեղի զանգուածը շերտ շերտ կտրելով, որոշ մասեր ոչնչացնում են. հետեանքը լինում է այն, որ միաժամանակ անհետանում են հոգեկան կեանքի որոշ մասեր, որոշ հոգեկան գործողութիւններ: Միևնոյն հետեանքն է ստացւում, երբ մարդու ուղեղը պատահաբար վիրաւորւում է. ոսկորի մի կտոր ցցւում է ուղեղի մէջ, հետեանքը լինում է ոչ միայն մտաւոր գործունէութեան խանգարում, այլ և ընաւորութեան կատարեալ փոփոխութիւն: Հիւանդը դառնում է կասկածոտ, ծածկամիտ, յամառ. ոսկորի կտորը հանելու պէս անհետանում է նաև հոգեկան խանգարումը: Նոյնպէս և զառամեալ հասակում տեղի է ունենում հոգեկան գործունէութեան նուազում. յաճախ դժգոյնութեան ընդունակութիւնը բոլորովին կորչում է: Անատոմիական հետազոտութիւնը ցոյց է տալիս, որ դրա պատճառն է ուղեղի այլասերումը և կծկուելը: Բնագիտական դպրոցի հոգեբնութիւնների համոզումն այսօր այն է, թէ ամեն մի հոգեկան հիւանդութիւն ուղեղի հիւանդութիւն է. միևնոյն է, անատո-

միական հետադոտութեամբ կարող է այդ ապացուցուել, թէ ոչ: Ուրեմն, ուղեղն է հոգին:

Այս միևնոյն եզրակացութեանն են բերում մեզ նաև տիեզեցարանական դիտողութիւնները, տիեզերքի կեանքի զարգացման պատմութիւնը: Կար ժամանակ, ասում է նոր տիեզերաբանութիւնը, երբ երկրիս վրայ ոչ մի օրգանական կեանք չկար, ապա ուրեմն նաև ոչ մի հոգեկան կեանք. չկային այսպէս կոչուած գիտակցութեան երևոյթներ. այո, կար ժամանակ, երբ նոյն իսկ երկիրը գոյութիւն չունէր: Ինչ որ մենք այժմ մեր մոլորակային համակարգութիւնն ենք անուանում, հեռաւոր սկզբնական ժամանակներում ունէր մի վիթխարի գաղային կամ միգային զանգուածի կերպարանք: Մինչ այս զանգուածը դառնում էր իր առանցքի վրայ, հասարակածը հետզհետէ ուռչում էր և հասաւ այն աստիճանի, որ կտրուեց կենդրոնական մարմնից և իբրև հսկայական օղակ ազատ լողում էր տարածութեան մէջ. այս օղակը աւելի ևս լայնանալով, կտրուեց և դարձաւ անկախ մարմինների մի խումբ. այս պրոցեսսը կրկնուեցաւ թերևս շատ անգամ, և առաջ եկան կենդրոնական մարմնի՝ արեգակի շուրջը թաւալուող մոլորակներ, որոնցից մէկն է մեր երկիրը: Սկզբում լինելով տիեզերական նիւթի մի հրահեղուկ կաթիլ, նա հետզհետէ այնքան սառեց, որ նրա վրայ պինդ կեղև կազմուեց, և մթնոլորտի ջրային շոգիները խտացան, ջուր դարձան և թափուեցին երկրի մակերևոյթի վրայ: Այժմ միայն կարող էր երկրի վրայ օրգանական մարմին գոյանալ. ինչ եղանակով, չգիտենք: Սկզբում նա առաջ եկաւ իր ամենատարբական կերպարանքով, իբրև պրոտոպլազմա. այս մարմնիկները հետզհետէ ստացան ներքին կազմութիւն, առաջ եկան բըջիջներ, միջուկով ու պատեանով, որոնք ընդունակ դարձան անջատմամբ բազմանալու և բարդ համակարգութիւն կազմելու: Մարմնի մասերը գնալով տարբերուեցան, տարբեր գործարաններ դարձան, առաջ եկան բազմազան կենդանական էակներ. բազմակերպ կենդանական թագաւորութեան մի ճիւղից վերջապէս զարգացման շնորհիւ առաջ եկաւ մարդը, ձեռք բերեց նախ զանգաղ, ապա աւելի արագ աճող մտաւոր կարողութիւն և զգաց, որ ինքը գերազանց է կենդանական աշխարհի միւս անդամներից. այնպէս որ, երբ նա սկսեց անդրադառնալ իր ծագման վրայ, նրան անհաւատալի թուաց, թէ ինքը որևէ ազգակցութիւն ունի ստորին կենդանական աշխարհի հետ և իրան մի աւելի ազնիւ ծագում վերագրեց: Սակայն ընական գիտութիւնները խանգարեցին այս երազը. նրանք ցոյց տուին,

որ մարդը ոչ իբրև դիւցազն, կատարեալ կերպարանքով մտել է կազմ ու պատրաստ և իրեն սպասող ստեղծագործութեան մէջ, այլ իբրև մի խղճուկ հողածին, իր նմանների հետ տառապանքներով գոյութեան կռիւ է մղել և աստիճանաբար բարձրացել, այսօրուայ վիճակին է հասել: Անթիւ ու անհամար սիրուններ, որոնց մասին ոչ մի պատմութիւն չի պատմում, անհետ կորել են, մինչև որ վերջապէս նրա ամբողջ կազմուածքը, առանձնապէս ուղեղը, այնքան են զարգացել, որ նա կարողացել է հոգեկան-պատմական կեանքով ապրել:

Այս է հոգու անցեալը երկրիս վրայ: Իսկ ապագան:

Տիեզերական ֆիզիքան, այսպէս են ասում ընագէտները, ոչ մի կասկած չի թողնում այն մասին, որ կեանքը և նրա հետ հոգին, ինչպէս որ սկիզբ են ունեցել, այնպէս էլ վերջ պէտք է ունենան: Կըզայ ժամանակ, երբ այլ ևս երկնքում արև չի լինի: Նրա տաքութեան քանակն անսպառ չէ, որովհետև նա շարունակ դուրս է տալիս այդ, առանց համապատասխան փոխարկնութեան, ուրեմն և պէտք է ուժասպառ լինի: Այս կէտին հասնելուց առաջ երկիրն արդէն սառած կը լինի. նրա մակերևոյթի վրայ եղած ամեն տեսակ շարժման և կեանքի աղբիւրը արևի ջերմութիւնն է: Զերմութեան հոսանքի մի փոքր նուազումը բաւական է նախօրգանական կեանքը անհետացնելու, իսկ յետոյ ամբողջ երկրային մարմինը կենթարկուի անշարժ, սառուցեալ մահուան:

Այսպիսի նկարագիրը և բացատրութիւնները ճշդող տպաւորութիւն են գործում, ցոյց տալով, թէ որքան չնչին ու աննշան է կեանքը: Ինչպէս բորբոսած հացը ծածկում է կենդանի մարմինների ամբողջ աշխարհով, այնպէս էլ երկիրն իր երկարատև զարգացման ընթացքում մի վայրկեան ծածկում է կենդանի էակների ամբողջ աշխարհներով, որոնց մէջ է նաև, իբրև այս ստեղծագործութեան մի խաղ, մարդը: Կարճատև բողբոջումից յետոյ այս կենդանի աշխարհը վերստին կը մատնուի ոչնչութեան, որից գոյացել է. մի բան միայն կը մնայ, — յաւիտենական նիւթը և նրա շարժողութեան օրէնքները: Անսկիզբն անցեալի մէջ, երբ ոչ մի կեանք չկար և անվերջ ապագայի մէջ, երբ ոչ մի կեանք չի լինի, հանդէս է գալիս ներկայի և կեանքի մի ակնթարթը, մի վայրկեան, որ եթէ նոյն իսկ միլիոնաւոր տարիներ հաշուենք, դարձեալ չենք կարող ծայրը գտնել: Եւ այս մի ակնթարթում անհուն նիւթի մի չնչին մասը հանդէս է բերում Ֆոսֆորական պրոցեսսի այն պարմանահրաշ երևոյթը, որ ինքնագիտակցութիւն կամ հոգե-

Վան կեանք ենք անուանում. մի կարճատև միջանկեալ խաղ, որ մեզ որքան էլ կարևոր երևայ, անսահման տիեզերքի համար պարզագլէս մի աննշան պատահմունք է: Նիւթը և շարժումն են էականը, իսկ այն արտասովոր կերպարանքը, որ ստանում է շարժումը մի վայրկեան, տիեզերքի համար գրեթէ ոչինչ է. Եկարճատև խաղը միօրեայ թիթեռի, որ սաւառնում է յաւիտենականութեան անվերջ ովկիանոսի վրայ):

Այս օրինակով է ներկայացնում հոգեկան կեանքը տիեզերքի մէջ նոր մատերիալիզմի հայրը՝ Լուդվիգ Բիլհաներ իր «Ոյժ և նիւթ» գրքի մէջ <sup>1)</sup>:

ԴՐ. Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

(Գր շարունակովի)

<sup>1)</sup> Kraft und Stoff գրքի մէջ արծարծում են որոշ կերպով այս զաղափարները. Ղիայ Աստուած և Ղիայ նպատակ բնութեան մէջ. նաև գոյութիւն շունի որևէ առանձին հոգեկան գոյացութիւն, անմահութեամբ և ազատութեամբ օժտուած: Պաուլսէն համարում է այս գիրքը փիլիսոփայական տեսակէտից անարժէք, նրա բացատրութեան եղանակը անյաշող և հեղինակին բնագանցական-վերացական մտածողութիւնների անընդունակ. խոստովանում է սակայն, որ այդ գիրքը 1855-ից մինչև 1888 թիւը լոյս է տեսել 16 հրատարակեամբ գերմաներէն, նաև թարգմանուել է 13 օտար լեզուներով և լոյս է տեսել բազմաթիւ հրատարակութիւններով: Առաջին տարիներում նա անլի տարածում էր կրթուած, եկեղեցուց ու դասնութիւնից սառած միջին հասարակութեան մէջ, իսկ այժմ տարածում է հասարակութեան ստորին խւանրի մէջ, դարձել է սոցիալ-դեմոկրատական շրջիկ քարոզիչների ձեռնարկ: Նրա արժանիքներն այն են, որ տալիս է բազմաթիւ բնագիտական և բնագաղտմական տեղեկութիւններ հանրամատչելի կերպով, արհամարհում է եկեղեցին, նրա դասնութիւնը և աստուածաբանութիւնը: Առաջինի համար ընթերցողը շնորհակալ է, իսկ վերջին կէտի շնորհի հեղինակը վատապաւում է վստահութիւն և համակրանք. նա հանդիսանում է իբրև ազնիւ մարդկանց համար մարտնչող ընդդէմ աստութեան, յիմարացման, անազատութեան և անիրաւութեան:

Այս կարգին է դասում Պաուլսէն նաև Հեկկելի յայտնի գրուածքը, Die Weltträtsel (4 Aufl. 1900), որ քիչ շարաթիւների մէջ սպառուել է 10,000 օրինակ. գրքի նպատակն է բնութեան ընթացքի մէջ հոգեկանի արժէքը նուազեցնել, համարես վերացնել: Գրօնը և փիլիսոփայութիւնը համարում են խաւարի և սքանութեան ոյժ, որովհետև նրանք հոգեկանը էականն են համարում իրականութեան մէջ և հոգին իրերի միջնակէտ և նպատակ են դարձնում: Այս վերջին աշխարհայայտացքը Հեկկելն անուանում է անթրոպիզմ (Antropismus):